Անուշ Թասալյան

Մոլորակն ինձ մի գարուն է պարտք

Կատուն խախտեց օդում կախված լռությունն ու իր փամփլիկ պոչը քսելով ոտքերիս՝ հիշեցրեց իր գոյության մասին: Ես հասկացա՝ այնքան եմ խորասուզվել մտքերիս հորձանուտում, որ կտրվել եմ իրականությունից: Այդ պահին ինձ աշխարհին կապողը ճոճաթոռս էր, որ մեկ առաջ, մեկ հետ ճոճվելով, մտքերս էր կարդում: Բայց կարծես հոգնեց, ու կանգ առավ... Ինձ իմ տուն «հրավիրող» այս պահին չկա, որովհետև դու դեռ տանը չես: Իսկ երբ տանը չես . . . Երբ տանը չես, պարզապես քայլում եմ, որովհետև երբեմն ոտքերն իրենք իրենց քայլում են, իսկ ուղեղն ինքն իրեն է մտածում, չի ուզում տիրոջն անհանգստացնել: Հասկանում են, որ, մեղմ ասած, տխուր ես, ու չեն խառնում քեզ իրենց գործերին: Երբեք չեմ սիրել գործուղումները: Քո՛ գործուղումները, ինչի պատճառով գիշերը ծանրանում է հոգնած կոպերիս: Դրանք քեզ համար գուցե և հետաքրքիր ու բազմազան են, իսկ ինձ համար՝ դժվար ու ձանձրալի: Առավել ևս այս անգամ, երբ ամեն ինչ տակնուվրա է եղել ինչ-որ թագավարակի պատճառով: Ինչ –որ , մեղմ ասած... Այլևս ոչ մի հեքիաթ չղջիկների մասին: Գոնե իմ սերունդը չի հորինի որևէ լավ բան այդ կիսամուկ-կիսաթռչունների մասին, որովհետև նրանք սպանեցին մեր մեջ թաքնված բյուր հեքիաթները՝ տանը մնալու, աշխարհից կտրվելու , արձակուրդ ունենալու գաղտնի հեքիաթը, որ յուրաքանչյուրիս մեջ թաքուն ապրում էր: Հիմա չկա այդ հեքիաթը: Դուռն աշխարհի առաջ փակելու մտորումներն իրական դարձան: Իսկ դուք ասում եք՝ հեքիաթ: Կոտրվեցին բոլոր բարի հեքիաթները, մոլորվեցին մեր մտքերից, ու երես դարձրեցին: Հեքիաթ, մանկական բանաստեղծություն կամ առակ չղջիկի մասին: Էլ որևէ մեկը չի գրի: Ոմն չղջիկ սպանեց բոլոր հեքիաթները, որոնք դարձան իրականություն՝ դառն ու աղետաբեր, ու մենք արթնացանք մի օր այլ

իրականության մեջ: Տանը մնալու հեքիաթը դարձավ իրականություն՝ անպատեհ ու չպլանավորած:

Պատուհանից կախված լիալուսինը ներս սողոսկեց՝ իր հետ բերելով այս գարնան փշատի ու յասամանի՝ հիշողությամբ վերականգնվող բույրը: Ու ես հասկացա, որ մոլորակն ինձ իմ կյանքից գողացած մի գարուն է պարտք: Լուսինն ընկավ սուրճիս գավաթի մեջ, հոգնած լող տվեց, քնեց կատվի հարևանությամբ: